ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Անցեալ ամի Նոյեմբերի 2 ին ժամանեց Մայր Աթոռս Կ. Պոլսեցի Պ. Արրահամ Ց. Այվազեանցը բերելով իւր հետ 10—19 տարեկան աշակերտացուք Մայր Աթոռոյս ճեմարանում ընդունել տալու համար։ Սորա գալստեան լուրը եւ դիտաւորութիւնը Հոկտեմբերի 12 ին մասնաւոր նամակաւ այստեղ հասնելուն պէս հետեւեալ օրը Վեհարանից հեռագրուեցաւ Կ. Պոլսոյ Պատրիարգարանին՝ ազդել նորան յետս կասել իւր դիտաւորութիւնից, նոր աշակերտացուք ճեմարանում ընդունելութեան անհնարաւորութեան յարգելի պատճառները նորան յայտնելով. բայց Պատրիարգարանը փոխանակ ուրախի եւ իցէ միջոցաւ Վեհարանի հեռագրական պատուէրն ի կատար ածելու պատասխանումէ թէ՝ նա — պ. Այվազեանցը 28 աշակերտացուներով հանդերձ արդէն մեկնած է Կ. Պոլսէն առանց Պատրիարգարանի յանձնարարութեան։ Նոյն օրը հեռագրուեցան Վեհարանից թէ՝ Բաթում եւ թէ՝ Տփխիսու Կոնսիստորիային ամենայն հնարք ի գործ դնել պ. Այվազեանին յետ դարձնելու համար, մինչեւ անգամ գիմել եւ ոստիկանութեան. բայց պ. Այվազեանը ամենի պատուէրներն ու հրամանները առ ոչինչ համարելով Նոյեմբերի 2 ին եկաւ ժամանեց ի Մայր Աթոռս։

Թէ՝ որքան պախարակելի է պ. Այվազեանի այսօրինակ վարմունքը, եւ թէ՝ Կ. Պոլսոյ Պատրիարգարանը ո՞ր աստիճան զանցառութեամբ՝ եւ այն չքմեղ մանկանց ծնողքը ո՞ր աստիճան թեթեւամտութեամբ են վերաբերուել դէպի՞ պ. Այվազեանի այնօրինակ յանդուգն վարմունքը, ընթերցող Ազգայինք կարող են ամենայն ճշդութեամբ հասու լինել՝ ճեմարանի Մեծ. Տեսչի առ Կ. Պոլսոյ Պատրիարգարանն ուղղեալ հանդամանապատում գրութիւնից, որը հարկաւոր համարեցինք հրատարակել Արարատիս միջոցաւ ի գիտութիւն եւ ի զգուշութիւն ամենայն մանաւանդ Տաճկաստանաբնակ սիրելի Ազգայնոց մերոց ապագայում։

Որչափ եւ բարենպատակ լինէր պ. Այվազեանի ձեռնարկութիւնը, ինչպէս ամենքին կամենումէր հաւատացնել, այնու ամենայնիւ նա իբրեւ «Ազգային երեսփոխան» եւ «ուղեւոր խրմ-

բագիր, տիտղոսներ իւր վերայ կրող մի անձն, պարտական էր հասկանալ, որ ոչ մի ձեռնարկութիւն առանց խոհուն ծրագրի եւ կանոնաւոր ուղղութեան երբէք չէ կարողանում հասնել իւր բարի նպատակին: Արդարեւ Մայր Աթոռոյս ձեմարանը եւս իբրեւ ամենայն Հայոց սեպհական ազգային հաստատութիւն պարտական է իւր ծոցում սնուցանել եւ դաստիարակել անխտիր թէ Ռուսիաբնակ թէ Տաճկաստանաբնակ եւ թէ Պարսկաստանաբնակ հայ մանուկներին, բայց եւ այնպէս սա, ինչպէս եւ ամեն սորա նմանները, ունի իւր կառավարութեան եւ գործառնութեան անհրաժեշտ ծրագիրն ու կանոնները, որոց ճշտութեամբ կատարելովը միայն կարող է սա անսայթաք եւ արդիւնաւորապէս ծառայել իւր ազգօգուտ նպատակին: Այս ծրագիրն ու կանոնները 1879 եւ 1880 թուականներում պաշտօնապէս հրապարակուած եւ ուղարկուած են ամենայն տեղ, նոյնպէս եւ Կ. Պ. Պատրիարգարանին. ուրեմն ձեմարանի հետ գործ ու յարաբերութիւն անել ցանկացող ազգային հաստատութիւնք եւ մասնաւոր անձինք պարտաւոր են միշտ ինկատի ունենալ այդ ծրագիրն ու կանոնները եւ այնպէս վերաբերուիլ դէպի սա: Բայց ընդհակառակն, ցաւելովպէտք է ասել, որ թէ Կ. Պոլսոյ Պատրիարգարանը եւ թէ Տաճկաստանի այլեւայլ վիճակաց Առաջնորդները միշտ զլացել են իւրեանց լուրջ ուշադրութիւնը ոչ միայն 1879 եւ 1880 թուականներում իրանց ուղարկուած ձեմարանի ծրագրին, այլ նորա վարչութեան առանձին պաշտօնական գրութեանց իմաստիցը: Օրինակ վարչութիւնը խնդրում է ուղարկել որոշեալ վիճակներից, որոշեալ ժամանակամիջոցում եւ որոշեալ թուով, ըստ հասակի եւ ըստ չափու ուսման եւ գիտութեան ձեմարանի Ծրագրին համապատասխան մանուկներ. (բայի Ռուսերէն լեզուից, որը սկսումեն այստեղ ուսանիլ Տաճկաստանաբնակ հայ մանկունք) իսկ նոքա կամ չէին ուղարկում եւ կամ ուղարկում էին 15—20—21 տարեկան աշակերտացուք՝ ծրագրում նշանակուած ուսմանց եւ գիտութեանց մէջ բոլորովին թերի եւ այն՝ Նոյեմբեր եւ Դեկտեմբեր ամիսներում, որոնցից շատերը մինչեւ անգամ ունենումէին իւրեանց ձեռքում թէ Պատրիարգական Փոխանորդից եւ թէ վիճակաց Առաջնորդներից առանձին յանձնարարագրեր: Ձեմարանի վարչութիւնը եւս սոցանից ոմանց ըստ բացառիկ շնորհաց հանգու-

ցեալ Վեհափառ Հիմնադրի ընդունում՝ զետեղում էր այլեւ-այլ դասարաններում մեծ դժուարութեամբ եւ ումանց եւս կամայ ակամայ վերադարձնում իւրեանց տեղերը՝ ձեմարանի ծախքով՝ ի մնաս ձեմարանի եւ ի ցաւ սրտից ուսումնատենչ մանկանց եւ նոցա աղքատիկ ծնողաց: Այսպէս վարուել հարկադրեցաւ ձեմարանի վարչութիւնը եւ Պ. Այվազեանի բերած քսանեւութ աշակերտացուցաց հետ. նոցանից միայն ինը հարցաքննութեամբ ընդունելով ձեմարանի եւ նորա Վարժոցի մէջ. իսկ մնացեալները վերադարձոյց Տփխիս Օսմանեան հիւպատոսի մօտ, որովհետեւ սրանց թողած փախած էր Պ. Այվազեանը: Դարձեալ փառք եւ պատիւ մեր Տփխիսու բարեպաշտ Ազգայնոց, որոնք ինչպէս տեղեկացանք, դրամական հանգանակութեամբ հոգալով տղայոց ճանապարհածախքը վերադացձրած են ի Կ. Պոլիս:

Պ. Այվազեանի իւր «Երէոփոխան» եւ «Ուղղոր Խմբագիր» պատկառելի տիտղոսներին անվայել այս տարօրինակ ձեռնարկութիւնը այն աստիճան զզուանք յարոյց մեր բանիմաց Ազգայինների սրտի մէջ եւ այնքան մեղադրանքներ կուտեց ձեռնարկողի գլխին, որ ինձ այլ եւս ոչինչ չի մնայ ասել, բայց միայն մերկացնել նորա մի քանի ճարպիկ եւ պատրուակեալ կեղծ խօսքերի պժգալի ստութիւնները, որոնցով ջանք էր անում խաբել ամեն պարզամիտներին:

Պ. Այվազեանը նախ՝ իւր գալատեան առաջին օրերում պընդումէր մեզ հաւատացնել թէ՝ Ե՝ յանձնարարութիւն «ՆԻՄ ՎԵՀԱՓԱՌԻՆ, մինչդեռ իւր՝ յանուն Վեհափառին մատուցած խնդրագրութեան մէջ գրումէ «ԸՆԼԷՔ Ս՝Ղ ՍՂՂԱԿԻ ԿՐԱՄՆԻ ԿԱՄ ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԸՆԿԼԷ Ս՝Ղ.» եւ երկրորդ՝ որ աւելի ծիծաղելին է, իւր այս պախարակելի ձեռնարկութիւնը պնդումէր ընդունել տալ պարզամիտներին իբրեւ «ԿՐՈՆԻԱՆ ԱՌԱՓԼՈՒԹԻՒՆ» (չակերտների մէջ առնուածները իւր սեպհական խօսքերն են) եւ երբ նշանաւոր անձերից մինը նորա բերած մանուկներին այս տեղ թողնելու եւ փախչելու դիտաւորութեան լուրը երես առ երես յայտնումէր իրան, նա — Պ. Այվազեանը սովորական ճարպիկ արագախօսութեամբ բացագանչումէր, «Դ՝ԱՐ ՂԷ ԲՆԼԼԷ ԿՃԱՌԱԼԷ՝, ՊՐՈՆ, Ե՝Ս ՁԷ ՍՆԻՄ ՓԼՈՒԽ, Ե՝Ս ԸՆԴԱՌԷԱՑ ՊԷՐ Ե՝Ա ԱՂՆԻ՝ ՄԱՐԴ Ս՝ ԷՄ, Ե՝Ս ՀԱՍԱՐԱԿՈՒՆԷՆ ԸՆԴՐԻԱԼ ԵՐԷՈՓԻԱՆ Ս՝ ԷՄ»:

Պ. Այվազեանը թող այժմ ուսանի եւ քաջ համոզուի, որ թէ մենք եւ թէ ամեն ողջամիտ Աղգայինք՝ առանց մտագրեալ նպատակին հասնելու անհրաժեշտ պայմաններն ու յարմարութիւնները աչքի առաջ ունենալու քան եւ ութ ուսումնասէր մանուկներ աշխարհի մի ծայրից միւս ծայրը հաղարաւոր վերստ ճանապարհի նեղութիւններով առնուլ էջմիածին բերելը ոչ թէ «կրոնական սուտ-փելը-ին», այլ գերազանցապէս անհանգիստ-ին կամ մի այլ անյնական շահասիրութիւն-ին ենք համարում. իսկ այդ խղճուկ մանուկներին իւր ծնողաց եւ հայրենեաց գրկից անջատելով հեռաւոր օտարութեան մէջ անխնամ թողուն ու փախչելը ոչ թէ «ողնի-»՝ այլ խաբեբայ մարդոց ոճնախաղրութիւն անողնութիւն-ին ենք համարում:

Վերջապէս Պ. Այվազեանը որքան խորամանգութեամբ նոյնչափ եւ թեթեւամտութեամբ վարվեցաւ իւր պախարակելի ընթացքի մէջ: Նա ճեմարանի Մեծ. Տեսչի հրաւիրանաց անլուր գանուելով, չներկայացաւ տղայոց ոչ մի առարկայից հարցաքննութեանը, (որին ներկայ էին թէ Սինոդի Անդամ Գերապատիւ Եպիսկոպոսունք եւ թէ Վարդապետք) այն խորամանգ դիտաւորութեամբ, որ այն հարցաքննութեան անաչառութեան վերայ կասկածանաց սուտեր ձգելու տեղիք ունենայ ժամանակին. բայց երբ տեսաւ թէ՝ տղայոց ինչ ասոիճանի անպատրաստ լինելը հրապարակ եկաւ, «իմ քէրթաթ պղայէք արդարք ընչ անպարկաստ էն», ասաց, և ընչ անհամապատասխան ճէմարանի վարչական և ուսումնական կանոնաց, այնու ասենայնի- Յորդանան քէրթաթ էմ զանդ, ինչն պէտ է դրուս-էն»: Պարոնը տակաւին չէ հասկանում, որ ճեմարան կամ ուսումնարան ասածը Էջմիածնի մեղուաբուխ յորդանանը չէ, որ միանգամ ջրով լուացմամբ մեղաւորի մեղքերը քաւէ, այլ նա մի բարոյական կրթարան է. որ իւր կրթութեան գործը ժամ առ ժամ օր ըստ օրէ եւ ամ ըստ ամէ ասոիճանաբար յառաջ է տանում եւ մկրտում բարոյականութեան յորդանանի ջրով:

Ուրեմն թող համոզուին մեր սիրելի Աղգայինք, որ Պ. Այվազեանի այս ձեռնարկութիւնը ոչ թէ «ողնի- հայի կրոնական սուտ-փելը-ին էր», այլ անյնական շահախնդրութիւն-ին մի այլանդակ էջանակի փոքն:

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՐ,

Պ. Ըրրահամ Ա.յվազեան ժամանեալ ի Ս. Էջմիածին յ2 Նոյեմբեր ամսոյ հանդերձ 28 աշակերտացուցքն՝ ներելովք ընդ իւր ի Կ. Պոլսոյ, խնդրամատոյց եղև առ Վ.եհափառ Կաթողիկոսն ամենայն Հայոց ընդունել զնոսա յորդեգրութիւն ճեմարանիս. և այս իսկ է պատճէն խնդրագրոյն.

Նորին Վ.եհափառութեան

Ծայրագոյն Պատրիարքի և Կաթողիկոսի ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգայ Դ.ի

Ազգային Երեսփոխան Ըրրահամէ Ա.յվազեան

Ամենախոնարհ խնդիր.

Եռանդագին իղձ և անդուլ աշխատութիւն Ձերոյին Վ.եհափառութեան՝ տարածանելոյ ի սփիւռս Ազգիս զուսումն Կրօնի և բարոյական մակացութեանց, աշխարհաբարող ապաքէն եղեալ, և յանժիտելի ապացոյց այդր եռանդեան զԳէորգեանն հոյակապ կառուցեալ զհանրակրթական ճեմարան. ուրանօր մանկտին Հայաստանեայց՝ թուով աւելի քան զերկերիւր, վայելեալ յանկշիռ շնորհս հայրագորով խրնամոց և սիրոյ Վ.եհափառ Տէրութեանդ՝ պարապին ձրիաբար իջմամբ կաթին ուսման և գիտութեան.

Ի դոյն այդ փափաք ուսումնածարաւ ըղձից վառեալ են բազումք ի Տաճկահայ մերազնէից՝ յուղի այսր արկանելոյ յաշակերտութիւն ի մեծահամբաւ ճեմարանիս զՀայասեռ մանկտին, որպէս ի բարեպատեհ միջոցի անդ Միւռոնօրհնութեան՝ ի մատչելն իմ ի համբոյր Ս. գարշապարաց Աստուածարեալ Հօրդ Թարգմանաբար ի յայտ ածել համարձակեցայ, ուր և Վ.եհափառութիւն Ձեր գորովեալ ի լուր ջերմագին ըղձից սիրասուն որդեկացն ոչ երկուացաւ յայտարարել բարեհաճ կամօք եթէ՝ «Միշտ բաց են զրունք Գէորգեան ճեմարանին առաջի Հայաստան մանկուցն՝ որ խսփիւռս աշխարհի», քաջալերեցայ հոգւով, և ապաստան ի դոյն յայդ խրախոյս կրթանուէր յայտարարութեան, թէպէտ ոչ ուղղակի հրաման ինչ կամ յայտարարութիւն ընկալեալ, ի վերադարձին իմում ի Կ. Պոլիս մտադիր եղէ յանձն ընդ Աստուածապահ թևոցն խնամք առնել հինգ կամ վեց աշակերտս ի Գէորգեան ճեմարանիս.

Բազումք ի մերազնէից լուեալ զարամադրութիւն իմ զայս, և յաւէտ ի բուռն տենչ ուսումնասիրական բորբոքեալ, յոգնաթախանձ եղեն ինձ առնուլ ածել ի միասին զորդիս իւրեանց կամ զորդեգիր, և Իրը մարթ էր ինձ. Վ.եհ. Տէր, մերժել զնոսին նոցին և զպաղատանս,

առանց անդատապարտ յաչս նոցին երևելոյ և անբասիր։ Ուստի հրա-
կաղրեցայ 28 արակերտս նորատիս, հանդերձ պատշաճաւորն վկայա-
կանաք բերել — թէպէտ ապաժաման՝ զոր ոչ վարանիմ խոստովանել։—
ընդ իս ի Ս. Էջմիածին յաշակերտութիւն ճեմարանիս։ որոց անուանք
են այսոքիկ։

Աղնաւուր Յ. Աղնաւուրեան (Բալուցի), Արայ Ա. Խանճեան (Իս-
կիւտարցի), Արամ. Մ. Արմէնեան (Իսկիւտարցի), Արշակ Մ. Բէրէեան
(Գատը գիւղցի), Արմենակ Յ. Զաքարեան (Սամաթիացի), Եդուարդ Ս.
Հէքիմեան (Կղզեցի), Եպիփան Մելքոնեան (Իսկիւտարցի), Թադէոս Ա.
Թարբօշճեան (Պէշիկթաշցի), Լեւոն Սեղբոսեան (Բերացի), Լեւոն Ռ.
Ապրօեան (Պէշիկթաշցի), Լեւոն Յ. Բանիկեան (Խոշմանցի), Խաչիկ Ն.
Այվազեան (Գանտիլլեցի), Խաչիկ Դանիէլեան (Գատը - գիւղցի), Հրանտ
Վ. Այվազեան (Գանտիլլեցի), Համբարձում Մարգարեան (Քղեցի),
Ճանիկ Դ. Բէյներճեան (Երզնկացի), Մելքոն Մանուկեան (Կարնեցի),
Մկրտիչ Կ. Գուլյուժճեան (Իսկիւտարցի), Յարութիւն Ա. Գամպէրեան
(Կէտիկ-փաշացի), Յարութիւն Սիմէոնեան (Գում-գաբուցի), Յակոբ Գ.
Զիլինկիրեան (Եգիպտացի), Յովհաննէս Գ. Դերձակեան (Գում-գաբու-
ցի), Յովսէփ Երկանեան (Միջագիւղցի), Պետրոս Սահակեան (Արմտան-
ցի), Ռուբէն Սեւեան (Միջագիւղցի), Ստեփան Պ. Ճիզմէճեան (Իսկիւ-
տարցի), Վահան Յ. Գրէնկեան (Իսկիւտարցի), Տաքէս Յ. Քափամա-
ճեան (Գատը գիւղցի)։

Այլ յուսով եմ գուշնաքեայ իմն ծառայութիւն մատուցանելոյ,
ըստ չափու կարողութեանս, յօգուտ Աղգին և ի մեծ փառս անուան
Գէորգեան ճեմարանի մխեցայ յասպարէզ։ Եկի, հասի ի Ս. Էջմիածին
և լուայ զվերջին կարգադրութիւն վարչութեանն՝ զորմէ անտեղեակ
իսկ էի գլխովին ի գտանելն իմ ի Կ. Պոլիս։ իրազեկ եղէ անհնարին
դժուարութեանցն յաջողութեամբ ի գլուխ զգործն հանելոյ։ և արդ
ոչ այլ ինչ մնայ ինձ յելս հնարիցն, բայց միայն հայցել զգութ շնոր-
հաց Աստուածաբեալ Վեհապետիդ, արժանի զիս համարելով բացառիկ
խնամոց անտես առնելոյ զոր ինչ եղեն ցայս վայր։ և մանաւանդ ի
գութ և ի գորով հայրական շարժեալ ընդ արգահատելի վիճակ այժ-
մու կացութեան մանուցոյն, և զյոյս ակնկալութեան ծնողաց նոցա և
պաշտպանաց ոչ ի դերև հանեալ, տնօրինել զոր ինչ հարկն իցէ և
արժան, ի մխիթարութիւն նոցա և ի մեծ փառս անմոռանալի յիշա-
տակի պանծալի անուան Վեհափառ Հիմնադրիդ ճեմարանիս և ի պայ-
ծառութիւն Մայր Աթոռոյ Հայաստանեայց առաքելական Ս. Եկեղեց-
ւոյ և Աղգիս։

Մնամ համբուրիւ Քրիստոսազօր Աջոյդ

Ձերոյին Վեհափառութեան

ամենախոնարհ ծառայ և որդի Ա. Յ. Այվազեան։

9—21 Նոյեմբեր 1882

Ի Վ-ՂՐԷ-ԳՈՐ։

Եւ Վեհափառ Հայրապետն ընկալեալ զինդրագիր Նորին, այսպէս մակագրել բարեհաճեցաւ.

«Ցանձնեմք և պատուիրեմք Պ. Տեսչի Գէորգեան ճեմարանի որոշել «զարժանաւոր և զընդունակ աշակերտացուսն ի սոցանէ համաձայն կա- «նոնաց և պայմանաց ճեմարանի, և առանձինն խնամարկել և պաշտ- «պանել մինչև բացցին տեղիք և զետեղեսցին ընտրեալքն ի պատշաճ «դասարանս ի յաջորդ կրթական շրջանի 1883/—4 թուականի, Լուիջիք «և զայլ զկարեւոր հրահանգս մեր ի Վահրամ Եպիսկոպոսէ.»

ԳԷՈՐԳ Գ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.

Վարչութիւնս համաձայն պաշտելի հրամանաց Նորին Վեհափառութեան ձեռն ի գործ արկ քննութեան, և յետ աւարտմանն մատոյց ի գիտութիւն Նորին Օծութեան զհետեւեալ տեղեկագիրն.

Նորին Վեհափառութեան

Ծայրագոյն Պատրիարքի և Կաթողիկոսի ամենայն Հայոց
Տ. Տ. Գէորգայ Դ ի

ի Տեսչէ Գէորգեան ճեմարանի
Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի

Ցայտարարութիւն

Ըստ բարձու հրամանի Վեհափառ Տէրութեանդ՝ մակագրելոյ ի խնդրագրութեան Պ. Աբրահամու Այվազեան 29 Ներկայ ամսոյս, ընդ համարաւ 451, Վարչութիւնս փոյթ յանձին կալաւ քննել զքսան և չորսն միայն ինչանակեալ թուոյ քսան և ութ աշակերտացուացն. Քանզի

Երկուքն՝ Զելինկիրեան Յակոբ 11 ամաց և Գրէնկեան Վահան 10 ամաց համաձայն քննութեան բժշկին, ախտաւորեալք էին.

Մին՝ Զաքարեան Արմենակ 10 ամաց, ուստի և անհամապատասխան հրահանգի ընտրութեան աշակերտաց ճեմարանիս.

Մին՝ Մանուկեան Մելքոն 16 ամաց, որ քննելի էր վասն Դ. դասատան, այլ բացակայ գտաւ յաւուրս քննութեան ի պատճառս հիւանդութեանն.

Այլ և զայս հիմն եդ իւրում նպատակի՝ զի որք զերկոտասանամեայ հասակս իւրեանց լրացուցեալ՝ թեւակոխէին յերեքտասան ամն, քննեսցին վասն Ա. դասատան.

Եւ որք զչորեքտասանամեայսն լրացուցեալ՝ քննեսցին վասն Բ. դասատան.

Եւ որք զհնգետասանամեայսն լրացուցեալ՝ քննեսցին վասն Գ. դասատան.

Հուսկ ապա, որք զվեշտասանամեայսն լրացուցեալ՝ թեւակոխէին յեօթնեւտասան ամն, քննեսցին վասն Դ. դասատան.

Արդ՝ այսու սկզբամբք քննելով զմնացեալ քսան և չորս աշակերտացուսն ի Կրօնադիտութեան, ի Հայոց լեզուի, յԱշխարհագրութեան, յԱզգային և ի Բնական Պատմութիւնս և ի Թուաբանութեան, աւասիկ զարդիւնս քննութեանն ամփոփեցաք ի ցուցակին ընդ սմին կցելոյ՝ յորում առանձին աղիւսակօք նշանակեալ են, եթէ ոյք ոմանք կարող իցեն այժմէն մտանել յԱ. և յԲ. դասարանսն, ոյք ոմանք պատրաստելիք վասն յառաջիկայ ուսումն. ամին, և ոյք ոմանք ոչ ընդունելիք։ Նոյնպէս և զթիւ ամաց իւրաքանչիւրոցն զետեղեցաք ի պատշաճաւոր տեղիս համաձայն ծննդական վկայականաց իւրեանց, իսկ որոց պակասէին ծննդական վկայականք՝ զայնպիսեացն նշանակեցաք զթիւ ամացն ըստ բերանացի յայտարարութեան իւրեանց։ Եւ որոց վասն նշանակեցաք ոչ ընդունելի, յայտ իսկ է ապաքէն, զի ի յաջորդ ամին յաւելեալ թիւ ամաց նոցա՝ պատրաստեսցին վասն բարձու դասատան, և որ չկարաց մտանել յայսմ ամի յո՛ և է դասատուն, չկարիցէ ի միւս ուսումնական շրջանին մտանել ի միւս այլ դասատուն։

Զայս ևս պարտ համարիմք յայտ առնել աստանօր, զի քննութիւնն տևեաց աւուրս չորս, յորում ներկայ գտան փոփոխակի ոմանք յուսուցչաց ճեմարանիս, ևս և ոմանք ի Ս. Հարց միաբանից Մայր Աթոռոյս։

Գեր. Մկրտիչ Արքեպիսկոպոս և Ներսէս և Մեսրովբ Եպիսկոպոսունք։

Արժ. Սահակ, Յակոբոս և Պետրոս վարդապետք։

Իսկ Պ. Այվազեան բացակայ գտաւ միշտ։

Զոր ի տեղեկութիւն մատուցանելով ամենախոնարհարար

Մնամ խոնարհեալ ի համբոյր Ս. Աջոյ

Թ 182 Հերոյին Վեհափառութեան

ի 17 Նոյեմ. 1882 ամի ամենախոնարհ ծառայ և որդի

Ի Ս. Էջմիածին Տեսուչ Գ. ճեմարանի Արշակ Նահապետեան։

Վ Ի Ճ Ա

Ուսումնառութեան 24 աշակերտաց-

	ԱՆՈՒԱՆՔ ԱՇԱԿԵՐՏԱՑՆ.	Գենդերական կիսարական	Տարիք	Կրօն		Հայոց լեզու		Հայոց պատմութիւն	
1	Այվազեան Հրանտ	չունի	12	ա.	դասրն.	բ.	դասրն.	չէ	ուսեալ
2	Արմէնեան Արամ	,,	13	ա.	,,	ա.	,,		,,
3	Դերձակեան Յովհաննէս	ունի	13	բ.	,,	բ.	,,	բ.	դասրն.
4	Բէրէեան Արշակ	չունի	13	բ.	,,	բ.	,,	բ.	,,
5	Սեղրոսեան Լեւոն	,,	12	բ.	,,	բ.	,,	չէ	ուսեալ
6	Սեւեան Ռորէն	,,	14	բ.	,,	բ.	,,	բ.	դասրն
7	Ապրոյեան Լեւոն	,,	13	բ.	,,	ա.	,,	չէ	ուսեալ
8	Գույումճեան Մկրտիչ	ունի	13	գ.	բժ. պտ.	գ.	բժ. պտ.	գ.	բժ. պտ.
9	Հէքիմեան Եդուարդ	չունի	13	ա.	,, ,,	ա.	,, ,,	ա.	,, ,,
10	Այվազեան Խաչիկ	,,	12	բ.	,, ,,	բ.	,, ,,	բ.	,, ,,
11	Դանիէլեան Խաչիկ	,,	13	բ	,, ,,	բ.	,, ,,	բ.	,, ,,
12	Երկանեան Յովսէփ	,,	13	բ.	,, ,,	բ.	,, ,,	բ.	,, ,,
13	Սահակեան Պետրոս	,,	13	բ.	,, ,,	բ.	,, ,,	բ.	,, ,,
14	Քափամաճեան Տաքէս	,,	13	բ.	,, ,,	բ.	,, ,,	բ.	,, ,,
15	Խանճեան Արայ	,,	14	ա.	դասրն.	բ.	,, ,,	բ.	դասրն.
16	Փէնեարճեան Ճանիկ	ունի	14	չէ	ուսեալ	ա.	դասրն.	բ.	,,
17	Աղնաւուրեան Աղնաւուր	,,	15		,,	ա.	,,	չէ	ուսեալ
18	Մելքոնեան Եպիփան	չունի	15	ա.	դասրն.	բ.	,,	ա.	դասրն.
19	Աւետիսեան Թադէոս	չունի	15	ա.	,,	բ.	,,	ա.	,,
20	Մարգարեան Համբարձում	,,	15	չէ	ուսեալ	գ.	բժ. պտ.	չէ	ուսեալ
21	Գամպէրեան Յարութիւն	ունի	15		,,	ա.	դասրն.	բ.	դասրն.
22	Սիմոնեան Յարութիւն	չունի	15		,,	ա.	,,	չէ	ուսեալ
23	Պաղտասարեան Ստեփան	ունի	15		,,	ա.	,,	,,	,,
24	Բանիկեան Լեւոն	չունի	17		,,	բ.	,,	բ.	դասրն.

Կ Ա Ց Ո Ց Ց

ուրբաթ 1882 Նոյեմբեր 17

Թուագրութիւն	Աշխարհագրութիւն	Բնական պատմութիւն	ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ
ա· դասրն·	չէ ուսեալ	չէ ուսեալ	Այժմէն իսկ կարէ մտանել յա· դասարան
ա· ,,	,,	,, ,,	Այժմէն իսկ կարէ մտանել յա· դասարան
ա· ,,	բ· դասրն·	ա· դասրն·	Այժմէն իսկ կարէ մտանել յա· դասարան
բ· դասրն·	,,	չէ ուսեալ	Այժմէն իսկ կարէ մտանել յբ· դասարան
բ· ,,	ա· ,,	,, ,,	Այժմէն իսկ կարէ մտանել յբ· դասարան
բ· ,,	բ· ,,	,, ,,	Այժմէն իսկ կարէ մտանել յբ· դասարան
գ· բժ· պտ·	գ· բժ· պտ·	,, ,,	Ի յաջորդ ամին կարէ մտանել յա· դասարան, եթէ պատրաստեսցի·
գ· ,, ,,	գ· ,, ,,	գ· բժ· պտ·	Ի յաջորդ ամին կարէ մտանել յա· դասարան, եթէ պատրաստեսցի·
ա· ,, ,,	ա· ,, ,,	ա· ,, ,,	Մեծ է հասակաւ և խօսել իսկ հայերէն ոչ գիտէ, պարտ է սկսել զընթերցանութիւն, ուստի և չէ ընդունելի·
բ· ,, ,,	բ· ,, ,,	բ· ,, ,,	Թերի է յուսմունս, չկարէ պատրաստել ի յաջորդ ուսում· ամին, ուստի չէ ընդունելի·
բ· ,, ,,	բ· ,, ,,	բ· ,, ,,	Նոյն ըստ վերնոյն
բ· ,, ,,	բ· ,, ,,	բ· ,, ,,	Նախ մեծ է հասակաւ, բ· թերի յուսմունքս և չկարէ պատրաստել և գ· խուլ· ուստի և չէ ընդունելի·
բ· ,, ,,	բ· ,, ,,	բ· ,, ,,	Մեծ է հասակաւ և թերի յուսմունս· չկարէ պատրաստել ի յաջորդ ուսում· ամին· ուստի և չէ ընդունելի·
բ· ,, ,,	բ· ,, ,,	չէ ուսեալ	Նոյն ըստ վերնոյն
բ· դասր·	գ· ,, ,,	,, ,,	Միանգամայն և չէ ընդունելի
բ· ,,	չէ ուսեալ	,, ,,	Նոյն ըստ վերնոյն
գ· բժ· պտ·	,, ,,	,, ,,	Նոյն ըստ վերնոյն
գ· ,, ,,	,, ,,	,, ,,	Նոյն ըստ վերնոյն
գ· ,, ,,	,, ,,	,, ,,	Նոյն ըստ վերնոյն
բ· ,, ,,	,, ,,	,, ,,	Նոյն ըստ վերնոյն
բ· դասրն·	,, ,,	,, ,,	Նոյն ըստ վերնոյն
գ· բժ· պտ·	,, ,,	,, ,,	Նոյն ըստ վերնոյն
գ· ,, ,,	,, ,,	,, ,,	Նոյն ըստ վերնոյն
բ· դասրն·	,, ,,	,, ,,	Նոյն ըստ վերնոյն

Ծանօթ· ի նշանակեալ 24 աշակերտացուացն քննութեամբ ընկալեալ եղեն·

յԲ· դասարան ճեմարանիս· — Բէրէեան Արշակ, Սեղբոսեան Լեւոն և Թուբէն Սեւեան

յԱ· դասարան վարժոցիս· — Այվազեան Հրանտ, Արմէնեան Արամ և Գերձակեան Յովհաննէս

յԳ· բաժանում պատրաստակ·— Ապրշեան Լեւոն և Գուլյումճեան Մկրտիչ·

Արդ՝ զայս այսպէս մանրամասն առաջի առնելով Ձերում Սրբազնութեան, Վարչութիւնս պարտ անձին համարի հրաւիրել զուշադրութիւն Ձեր ի կրկին գրութիւնս Սորին, մին՝ ուղղեալ ի 10 դեկտեմբերի 1879 ամի. Թ. 110 և միւսն՝ ի 28 նոյեմբերի 1880 ամի. Թ. 109. որով.ք խնդրէր Սա չորիս յարմարաւոր աշակերտացուս, համաձայն հրահանգի ընտրութեան աշակերտաց, զերկուսն ի Կ. Պոլսոյ, և զերկուսն ի գաւառէն Ալշիոյ, առաքել ի Ս. Էջմիածին յաշակերտութիւն ճեմարանիս, և որպէս Ձերում Սրբազնութեան, նոյնպէս և Առաջնորդացն այլ և այլ վիճակաց Տաճկաստանի գրեցաւ ի զանազան ժամանակս՝ առաքելոյ այսր պատանեակս յաշակերտութիւն, և յամենեսին ինոսին գրութիւնս նշանակեցաւ եթէ թիւ ամաց աշակերտացուացն և եթէ ժամանակ առաքմանն. Այլ ներեսցի մեզ ասել, Սրբազան Հայր, զի ոչ միայն ապարդիւն թողիք զակնկալութիւն Վեհափառ Հիմնադրին և զբաղձանս Նորին և զմեր, ոչ ինչ փոյթ տանելով գործադրութեան իմաստից՝ պարունակելոց ի գրութիւնսն յայնոսիկ, այլ և ոչ իսկ խնամ տարայք հոգալ զիմաստից ծրագրոյ ճեմարանիս, առաքելով յայլ և այլ ժամանակս, ի դէպս և ի տարադէպս. պատանիս անյարմարս եթէ ըստ հասակացն և եթէ ըստ հմտութեանցն, միանգամայն և շնորհելով ի ձեռս նոցին պաշտօնական գրութիւնս՝ ստորագրեալս ի Գեր. Փոխանորդէն և կամ կնքեալս պաշտօնական կնքով Պատրիարքարանիդ. Եւ թէպէտ Վարչութիւնս՝ ըստ բացատրիկ շնորհաց Նորին Վեհափառութեան, ընկալաւ զոմանս ի պատշաճաւոր դասարանսն, այլ և պատահեցաւ զի և զոմանս մերժեալ ի բաց յետս առաքեաց, անհամաձայնութեան գտանելով զնոսա հրահանգի ընտրութեանն՝ որ տրամադրէ ունել աշակերտացուացն ամն հասակի երկոտասան, մինչդեռ, որք պաշտօնական գրութեամբ Պատրիարքարանիդ առաքեալք եղեն, ունէին ամն հասակի առաւել քան զՀնգետասան և թերի յուսմունս իսկ էին. մանաւանդ ի վերջին աւուրս, բաց յայլոց, էին երկու և երեք, որք թեւակոխեալ ի քսան և ի քսան և երկու ամս. հասակի իւրեանց թափուր և անպատրաստ գտանէին ի տարրական ուսմունս, ուստի և յետս առաքեցան վերստին, որոց և զճանապարհածախուցն հոգաց ճեմարանս, մինչդեռ չէր մեզ պարտ հոգալ զայն. որպէս յայտնի է Ձերում Սրբազնութեան ի պաշտօնական գրութեանցն՝ ուղղելոց ի Վարչութենէս առ Գեր. Փոխանորդն Ազգային Պատրիարքարանիդ.

Ի հրահանգին ի սմին ծրարելոյ (ճշգրիտ օրինակ է սա առաջնոյ հրահանգին ուղղելոյ առ Ազգ. Պատրիարքարանն յամին 1879 և 1880) ակն յայտնի տեսանի, զի ամք հասակի ընտրելոցն պարտին լինել ոչ պակաս քան զերկոտասան, և թէ՝ պարտին գտանել նոքա ի Ս. Էջմիածին 925ն օգոստոս ամսոյ, միով եօթնեկաւ յառաջ քան զսկզբնաւորութիւն տարեկան դասաւորութեան, և թէ ընտրեալքն պարտին բերել

ընդ իւրեանս՝ յաւանդ՝ ռուբլիս քսան և հինգ կամ աւելի, որպէս զի եթէ հարկ լիցի դառնալ նոցա ի Հայրենիս, մի ծանրասցին ծախք ճանապարհի նոցա ի վերայ Ճեմարանիս։ Թէպէտ ծրագիր Ճեմարանիս ըստ մասին փոփոխեցաւ այժմ, այլ հիմնական պայմանք և կանոնք նոյն կան և մնան անփոփոխ։ իսկ Ազգային Պատրիարքարանն անուշադիր թողեալ զայս էական կէտս ծրագրին, ի ձմերային եղանակս, պատանիս չքաւորս և անուսս բոլորովին՝ առաքէ պաշտօնական յանձնարարութեամբ յաշակերտութիւն ի Ճեմարան։

Այժմ՝ ի թիւս իսկ ընտրելոցն աշակերտացուաց Պ. Աբրահամու Այվազեան, որպէս և յայտ՝ յանդիման երևի ի ցուցակին, գտանին այնպիսիք ոմանք՝ որոց թեւակոխեալ յեօթնեւտասանամեայ հասակս իւրեանց, և թերի և անպատրաստք իցեն ի գլխաւոր ուսմունս, ի Կրօնի և ի Հայոց լեզուի, որոց և ի ձեռս երևին պաշտօնական յանձնարարագիրք Գեր. Փոխանորդին Ազգային Պատրիարքարանիդ։

Այո՛, Վարչութիւնս, ըստ խնկելի կամաց Նորին Վեհափառութեան, ունէր՝ զետեղել զնոսին ի համապատասխան կարգս Դ. դասատան. այլ ի՞նչ մարթ էր առնել զայդ, առանց վեր ի վայր շրջելոյ զկարգ և զկանոն ուսումնառութեան, ուստի և ի հարկէ ստիպեալ յետս դարձուցանել պարտաւորիմք։ Եւ այս ոչ մեզ ի մեղս գրեսցի, այլ այնմ՝ որ անուշադիր մնացեալ հրահանգաց ծրագրի Ճեմարանիս, պատանիս չքմեղս և անբասիրս, ի ժամու և ի՛տարաժամու, առաքէ այսր ընդ իւրով պատասխանատուութեամբ։

Հաւաստի եմք, Սրբազան Հա՛յր, զի ի խոր թափանցեալ իմաստից գրութեանս, ոչ՝ հաճեսջիք յայսմ՝ հետէ տեղի տալ անպատեհութեանցըս, և ոչ առաքեսջիք այսր, առանց գիտութեան և հրաւիրագրոյ Վարչութեանս, աշակերտացուս անյարմարս ըստ հասակացն և անհամապատասխանս ըստ հմտութեանցն։ Վարչութիւնս ունի գրել ի հարկին առ Ազգային Պատրիարքարանդ, ուստի չև առեալ նախապէս զորոշումն մեր և զպաշտօնական գրութիւնս Ճեմարանիս, մի զոք ի պատանեկաց Կ. Պոլսոյ առաքեսջիք այսր յաշակերտութիւն, եթէ յարմարաւորք իցեն նոքա և եթէ անյարմարք. որպէս զի մի լիցի մեզ չարաչար ի կիր արկանել զշնորհս և զհայրագորով խնամն Նորին Ս. Օծութեան, և զեղծանել նոքօք ի մեծ ցաւ սրտի աղքատիկ ծնողացն և նոցին իսկ ուսումնածարաւ մանկանցն։

Զսոյն զայս մատուցեալ ի տեղեկութիւն Ձերում Սրբազնութեան, Վարչութիւնս՝ ըստ բարձրագոյն հրամանի Նորին Վեհափառութեան Կաթուղիկոսին ամենայն Հայոց, պատիւ ունի խնդրել, զի հաճեսջիք զայս տեղեկագիր Վարչութեանս տալ ի հրատարակութիւն յԱզգային

լրագիրս տեղւոյդ՝ ի գիտութիւն ընդհանուր Հայոց, որպէս և մեք ունիմք ի մտադիր հրատարակել ի պաշտօնական Արարատ ամսագրի Մայր Աթոռոյս։

Զհաւատիս խորին յարգանաց մատուցեալ խոնարհաբար
մնամ
Ամենապատիւ Սրբազնութեանդ
ամենախոնարհ ծառայ և որդի
Տեսուչ Գէորգեան Ճեմարանի Արշակ Նահապետեան։

Թ. 188.

Ի 26 Նոյեմբերի 1882 ամի
Ի Ս. Էջմիածին.

ՍՐՏԻ ԿՍԿԻԾ.

Ձեռքը խաչած, գծուած շորեր է հագին,
Նա աղքատ է, բայց հարուստ միտքն ու հոգին,
Ճշմարտութեան նա զինուոր է մտերիմ
Բայց խեղդվումէ նորա ձայն մէջ ամբոխին.
Եւ յուսահատ երբեմն դառն վշտերից
Այս խօսքերով յայտնում սրտի իւր կսկիծ,
«Հացն յիմարին՝ փողն անգութին ես տուած.
«Մենք այս աշխարհ հանդիսատես ենք եկած,
Ո՛վ Աստուած։»

***

Ով զօրեղ է, մերկ սուր բռնած իւր ձեռքին՝
Խրոխտալով մահ է սպառնում անզօրին,
Տներ քանդում՝ որբեր զրկում անդադար,
Ինքն անկարօտ՝ ուտում, խմում ճոխաբար.
Հապա ի՞նչպէս կսկիծ ի սիրտ ես չասեմ,
«Հացն յիմարին՝ փողն անգութին ես տուած,
Մենք այս աշխարհ հանդիսատես ենք եկած,
Ո՛վ Աստուած։»

***

Իւր կեանքի մէջ՝ ով իւր անձն է միշտ պաշտել.
Ընկերներին ատել, խաբել ու դաւել,
Ով իւր բերնում լեզու, գլխին խելք չունի,
Բայց բռնակալ վարմունքով միշտ անուանի,
Փառք ու պատիւ, կարծես, նորան է պահուած.
Անզօր, համեստ աշխատութիւն անարգուած,
Հապա ի՞նչպէս կսկիծ ի սիրտ ես չասեմ,